



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունիսի 2015թ.

N 85-Ս

ք.Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2015
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 3-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՈՄԱՆ ԵՎ
ԱՆՑԿԱՑՄԱՆ, ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **որոշում է**.

1. Հավանություն տալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի 2015 թվականի մայիսի 3-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման, ընտրական օրենսգրքի խախտումների վերլուծության և առաջարկությունների վերաբերյալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի հաղորդագրությանը՝ համաձայն հավելվածի, և այն ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողով:

2. Առաջարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Սրբուհի Արզումանյանին՝ սույն որոշման 1-ին մասում նշված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի հաղորդագրությամբ հանդես գալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովում:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ս.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի ԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՈՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընդհանուր ակնարկ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի 2015 թվականի փետրվարի 12-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրություն նշանակելու մասին» ՆՀ-15-Ն հրամանագրով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրությունը նշանակվել է 2015 թվականի մայիսի 3-ին: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի 2015 թվականի մայիսի 3-ի ընտրությունների նախապատրաստումն ու կազմակերպումն իրականացվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (այսուհետ՝ ԼՂՀ) նոր ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան, որն ընդունվել է 2014 թվականի հոկտեմբերի 29-ին և գործողության մեջ է դրվել 2015 թվականի հունվարի 1-ին: Օրենսգիրքը պարունակում է բազմաթիվ նորություններ, մի շարք իրավահարաբերություններ ենթարկվել են նոր կանոնակարգման: Հարկ է նկատել, որ ընտրական օրենսգրքի նախագիծն անցել է բավական ակտիվ հանրային ու խորհրդարանական քննարկումների փուլեր:

ԼՂՀ նոր ընտրական օրենսգրքի 17-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2015 թվականի հունվարի 28-ի N15-Ն որոշմամբ կազմավորվել են Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորների մանդատների թվին հավասար՝ թվով 11 ընտրատարածքներ: Ու քանի որ նախորդ ընտրությունների համեմատ ԼՂՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորների թիվը փոփոխություն է կրել՝ 16-ից դառնալով 11, ուստի նոր ընտրատարածքների սահմանները վերանայվել են: Ընտրատարածքները վերակազմավորելիս հաշվի են առնվել տարածքների աշխարհագրական, տեղագրական և ֆիզիկական առանձնահատկությունները, հաղորդակցության միջոցների առկայությունը, սոցիալական, վարչական այլ գործոններ և ընտրողների թիվը, որը ԼՂՀ ոստիկանության տրամադրած տվյալների համաձայն՝ 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 99 921 մարդ:

ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 13-ի N59-Ա որոշմամբ սահմանվել են այն տարածքային ընտրական հանձնաժողովները, որոնց լիազորություն է վերապահվել համապատասխան համայնքներում կազմակերպել և անցկացնել ընտրություններ: Թիվ 10 ընտրատարածքում, որն ընդգրկում է Շուշիի և Քաշաթաղի շրջանների բոլոր համայնքները, ընտրությունը կազմակերպելու և անցկացնելու լիազորությունը տրվել է Քաշաթաղի տարածքային ընտրական հանձնաժողովին, իսկ թիվ 11 ընտրատարածքում, որն

ընդգրկում է Շահումյանի շրջանի բոլոր, Ասկերանի շրջանի թվով 12 և Մարտակերտի շրջանի թվով 16 համայնքները՝ Մարտակերտի տարածքային ընտրական հանձնաժողովին:

ԼՂՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված լիազորությունների շրջանակներում ընտրությունների ողջ գործընթացը կազմակերպել և ընտրությունների օրինականության նկատմամբ վերահսկողությունն իրականացրել է ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2015թվականի փետրվարի 13-ին հաստատել է ԼՂՀ Ազգային ժողովի ընտրությունների կազմակերպման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը, որն ընդգրկում է տվյալներ 2015թվականի հունվարի 1-ին գործողության մեջ դրված ԼՂՀ նոր ընտրական օրենսգրքից բխող՝ ընտրության օր նշանակելուց մինչև դրա արդյունքների ամփոփումն իրականացվելիք թվով 115 հիմնական գործողությունների կատարման (միջոցառումների անցկացման) ժամկետների ու դրանց կատարման պատասխանատուների մասին: Համաձայն ժամանակացույցի՝ վերոհիշյալ ընտրական գործողությունների մեկնարկը տրվել է 2015թվականի փետրվարի 13-ին: Թեկնածուների, ինչպես նաև կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման փաստաթղթերը համապատասխան ընտրական հանձնաժողով ներկայացնելու ժամկետ է սահմանվել 2015 թվականի մարտի 9-ից մինչև մարտի 19-ի ժամը 18.00-ն, գրանցման ժամկետ՝ մարտի 19-ից մինչև մարտի 29-ի ժամը 18.00-ն, նախընտրական քարոզչության ժամանակահատված՝ մարտի 30-ից մինչև մայիսի 1-ի ժամը 24.00-ն:

Ազգային ժողովի 2015թվականի մայիսի 3-ի հերթական ընտրության նախապատրաստման և անցկացման հետ կապված ԼՂՀ ընտրական հանձնաժողովների (կենտրոնական ընտրական հանձնաժողով և մամլո կենտրոն, 6 տարածքային և 279 տեղամասային ընտրական հանձնաժողովներ) ծախսերի նախահաշվով նախատեսվել էր 89 178 200 ՀՀ դրամ: Ծախսերի մեջ զգալի մաս են կազմել ընտրության կազմակերպման և անցկացման աշխատանքներում ներգրավվող շուրջ 2600 հանձնաժողովականներին և այլ աշխատողներին տրվող փոխհատուցումների գումարներն ու աշխատավարձերը. շուրջ 63 060 200 դրամ կամ ընդհանուր ծախսերի 70,7%-ը:

Ընտրությունների նախապատրաստման և անցկացման գործընթացում ընտրական հանձնաժողովներին աջակցելու մասին 2015թվականի մարտի 4-ին ԼՂՀ կառավարությունն ընդունել է որոշում, որում տարբեր գերատեսչությունների անելիքներին է անդրադարձել:

Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանը մարտի 28-ին հրավիրել է ընդլայնված աշխատանքային խորհրդակցություն՝ նվիրված 2015 թվականի խորհրդարանական ընտրությունների անցկացմանը, որին մասնակցում էին հանրապետության օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների, քաղաքական ու հասարակական հատվածների ներկայացուցիչները: Նախագահ Սահակյանը կոնկրետ հանձնարարականներ է տվել շահագրգիռ մարմիններին ընտրությունները պատշաճ մակարդակով անցկացնելու կապակցությամբ՝ ընդգծելով, որ պետք է արվի հնարավորը, որպեսզի ընտրություններն անցնեն խիստ համապատասխան գործող օրենսդրության տառին ու ոգուն եւ ապահովվի քաղաքացիների ընտրական իրավունքների լիարժեք իրականացումը:

ԼՂՀ ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան կազմավորվել են 279 ընտրական տեղամասեր (այդ թվում՝ ք. Երևանում և Շուշիի քրեակատարողական հիմնարկում),

նույնքան էլ տեղամասային ընտրական հանձնաժողովներ, որոնք կազմակերպել և իրականացրել են քվեարկությունը:

ԼՂՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով հավատարմագրվել և ԼՂՀ Ազգային ժողովի ընտրությունների նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման ընթացքում դիտորդական առաքելություն են իրականացրել 28 երկրից Արցախ ժամանած 109 դիտորդներ, ինչպես նաև 3 տեղական կազմակերպությունների 111 դիտորդներ:

ԼՂՀ Ազգային ժողովի հերթական ընտրությունների քվեարկությունը տեղի է ունեցել 2015թվականի մայիսի 3-ին: Քվեարկության նախնական արդյունքները հրապարակվել են 2015թվականի մայիսի 4-ին ժամը 13:00-ին: Մեծամասնական ընտրակարգով պատգամավորների ընտրությունների վերջնական արդյունքները հրապարակվել են համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից մինչև 2015թվականի մայիսի 7-ը, իսկ համամասնական ընտրակարգով ընտրությունների վերջնական արդյունքները հրապարակել է ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ 2015թվականի մայիսի 10-ին:

ԼՂՀ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով 2015թվականի մայիսի 3-ի ընտրությունների քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության համաձայն՝ ընտրողների ընդհանուր թիվը կազմել է 102 042, քվեարկության մասնակիցների թիվը՝ 72 296 կամ ընտրողների ընդհանուր թվի 70,8 տոկոսը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացված քվեաթերթիկների թիվը՝ 103 699 է, մարված քվեաթերթիկների ընդհանուր թիվը՝ 31 401, անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 3380 (4,7 տոկոս):

Կուսակցություններին կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը կազմել է.

- | | |
|---|-------------------|
| 1. «Ազատ հայրենիք» կուսակցություն - | 32 632 (47,35 %) |
| 2.«Ազգային վերածնունդ» կուսակցություն- | 3 709 (5,38 %) |
| 3. Արցախի Ժողովրդավարական Կուսակցություն- | 13 105 (19,01 %) |
| 4. Լեռնային Ղարաբաղի կոմունիստական կուսակցություն- | 1 136 (1,65 %) |
| 5. «Խաղաղություն և զարգացում» կուսակցություն - | 591 (0,86 %) |
| 6. «Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն- | 12 965 (18,81 %) |
| 7. «Շարժում-88» կուսակցություն - | 4 778 (6,93 %) |

Անճշտությունների գումարային չափը 15 է:

ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2015թվականի մայիսի 10-ի N83-Ա որոշման համաձայն՝ ԼՂՀ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորներ են ընտրվել.

«Ազատ հայրենիք» կուսակցության ընտրական ցուցակից՝ տասնմեկ պատգամավոր,

«Ազգային վերածնունդ» կուսակցության ընտրական ցուցակից՝ մեկ պատգամավոր,

Արցախի Ժողովրդավարական Կուսակցության ընտրական ցուցակից՝ չորս պատգամավոր,

«Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցության ընտրական ցուցակից՝ չորս պատգամավոր,

«Շարժում-88» կուսակցության ընտրական ցուցակից՝ երկու պատգամավոր:

ԼՂՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետին, 123-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերին համապատասխան, հաշվի առնելով 2015 թվականի մայիսի 3-ի ԼՂՀ Ազգային ժողովի հերթական ընտրություններին համամասնական ընտրակարգով մասնակցած և կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի ու անճշտությունների թվի գումարի առնվազն 5 տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացած կուսակցությունների ընտրական ցուցակներում ընդգրկված Արայիկ Վլադիմիրի Հարությունյանի («Ազատ հայրենիք»

կուսակցություն), Սուրեն Ալեքսանդրի Գրիգորյանի (Արցախի Ժողովրդավարական Կուսակցություն), Արթուր Ալեքսանդրի Աղաբեկյանի («Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն) և Վալերի Լևոնի Բալայանի («Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն) պատգամավորական մանդատից հրաժարվելու մասին դիմումները, ինչպես նաև կուսակցությունների ընտրական ցուցակներում ընդգրկված Արթուր Բաբկենի Թովմասյանի և Արզիկ Սարտիրոսի Մխիթարյանի («Ազատ հայրենիք» կուսակցություն), Վահրամ Ռազմիկի Բալայանի («Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն) և Վիտալի Միխայիլի Բալասանյանի («Շարժում-88» կուսակցություն) մեծամասնական ընտրակարգով ընտրվելու փաստը, ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2015 թվականի մայիսի 18-ի նիստում կազմել է արձանագրություն՝ ԼՂՀ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորներ գրանցելու և պատգամավորի վկայական տրամադրելու մասին (*նորընտիր Ազգային ժողովի պատգամավորների ցուցակը կցվում է*):

ԼՂՀ Ազգային ժողովի 2015 թվականի մայիսի 3-ի ընտրությունների կազմակերպումն ու անցկացումը, խախտումների վերլուծություն

1) Նորմատիվ որոշումների ընդունում

ԼՂՀ ընտրական օրենսգրքի կանոնակարգումների համաձայն՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովը, ընտրական օրենսգրքին ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո, ընդունել է 58 նորմատիվ որոշումներ, որոնցով առավել մանրակրկիտ կանոնակարգման են ենթարկվել առանձին ընտրական իրավահարաբերություններ: Նշված որոշումները «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի պահանջներին համապատասխան գրանցվել են ԼՂՀ արդարադատության նախարարության կողմից և հրապարակվել ԼՂՀ գերատեսչական նորմատիվ ակտերի մեկ միասնական տեղեկագրում (N02 (117) առ 30.01.2015): Կենտրոնական ընտրական հանձնաժողովի բոլոր որոշումները տեղադրվել են նաև հանձնաժողովի պաշտոնական կայքում:

2) Մասնագիտական դասընթացների կազմակերպում

ԼՂՀ ընտրական օրենսգրքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել ընտրական իրավունք ունեցող այն քաղաքացիները, ովքեր կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով անցել են ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ և ստացել որակավորման վկայականեր:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացները կազմակերպում և անցկացնում է կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ իր սահմանած կարգին համապատասխան: Դասընթացները կազմակերպվում են Ստեփանակերտ քաղաքում և շրջաններում: Որակավորման վկայականները տրվում են ստուգարքի հիման վրա:

Նշված իրավական կանոնակարգումներին համապատասխան, ինչպես նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներ առաջադրելու համար Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունները կարող էին առաջադրել միայն որակավորման վկայական ունեցող քաղաքացիներին, կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2013թվականի սեպտեմբեր, նոյեմբեր ամիսներին և 2015թվականի փետրվար, մարտ ամիսներին կազմակերպել և անցկացրել է ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ: Կազմակերպված դասընթացներին մասնակցել և

որակավորման վկայականներ են ստացել 3286 քաղաքացիներ, որոնց մեծ մասը՝ 2497 մարդ (76 %-ը) 2015թվականի մայիսի 3-ին անցկացված Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընդգրկվել է տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմերում: Դասընթացի բոլոր մասնակիցները նախապես տեղեկացվել են դասընթացների կազմակերպման վայրի և ժամի մասին, այդ տեղեկությունները տեղադրվել են նաև կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում: Դասընթացներն անցկացվել են Ստեփանակերտ քաղաքում և հանրապետության բոլոր շրջաններում: Դասընթացների կազմակերպման և անցկացման, ստուգարքի հանձնման և որակավորման վկայականներ շնորհելու գործընթացը որևէ անձի կողմից չի վիճարկվել:

Ի տարբերություն նախորդ տարիների, դասընթացները վարվել են առավելապես բանավեճերի, ընտրական գործընթացում հաճախակի հանդիպող դրվագների վերլուծությունների, քննարկումների միջոցով:

Ուսումնական դասընթացներ են կազմակերպվել և անցկացվել նաև տարածքային ընտրական հանձնաժողովների անդամների համար:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմավորումից հետո նշված հանձնաժողովների անդամների համար սեմինարներ են անցկացվել:

3) Հանրային իրազեկում, հրապարակայնություն

ԼՂՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի համաձայն՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովը յուրաքանչյուր համապետական ընտրության ժամանակ կարող է հրապարակել ուսումնական ձեռնարկ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների, վստահված անձանց և դիտորդների համար: Օրենքի այս դրույթը կենտրոնական ընտրական հանձնաժողովն ապահովել է՝ ուսումնական ձեռնարկներից բացի հրապարակելով նաև ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացների ուղեցույց: Դիտորդների համար նախատեսված ձեռնարկը հրապարակվել է նաև օտարալեզու (ռուսերեն, անգլերեն) տարբերակով:

Հրապարակվել են տեղեկատվական բնույթի պաստառներ, հանրային իրազեկման մեկ հոլովակ: Համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցություններին, դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպություններին տրամադրվել են ընտրական օրենսգրքեր: Ընդ որում՝ դիտորդներին և լրատվամիջոցների ներկայացուցիչներին տրամադրվել են նաև ընտրական գործընթացների վերաբերյալ, ինչպես նաև Արցախի Հանրապետությունը ներկայացնող այլ կարևորագույն տեղեկությունների բավական ընդգրկուն բովանդակությամբ փաթեթ՝ եռալեզու տարբերակով: Քվեարկության նախորդ օրը կազմակերպվել է ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Սրբուհի Արզումանյանի հանդիպումը դիտորդների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ, կազմակերպվել են ասուլիսներ, հրապարակվել հոդվածներ և հարցազրույցներ, հեռարձակվել են հեռուստահաղորդումներ: Քվեարկության և դրան հաջորդող օրերին կենտրոնական ընտրական հանձնաժողովի մամուլի կենտրոնում կազմակերպվել են ընտրական ամբողջ գործընթացը լուսաբանող շուրջօրյա բրիֆինգներ (ձեպագրույցներ), որոնց մասնակցել են կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամները, դիտորդները, ինչպես նաև ընտրական գործընթացում առանձին գործառույթներ իրականացնող պետական այլ մարմինների ներկայացուցիչներ: Նպատակն էր՝ ապահովել ընտրական գործընթացի լիակատար թափանցիկությունն ու լուսաբանումը:

ԼՂՀ ընտրական օրենսգիրքը սահմանում է այն անձանց շրջանակը, ովքեր կարող են մասնակցել ընտրական հանձնաժողովների նիստերին: Ընտրական հանձնաժողովների նիստերը հրավիրվել և անցկացվել են ընտրական օրենսգրքի հիմնարար սկզբունքներին (հրապարակայնություն, թափանցիկություն) համապատասխան: Բոլոր նիստերի վերաբերյալ առկա են եղել հրապարակային ծանուցումներ, նիստերն անցկացվել են բաց:

Ընտրությունների ընթացքը քվեարկության օրը լուսաբանվել է Արցախի հանրային հեռուստատեսության ուղիղ եթերով:

Ընտրությունների հրապարակայնության և թափանցիկության, ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության, ընտրողների իրազեկման մակարդակի բարձրացման ապահովման ճանապարհին կարևորելով տեղեկության հասանելիությունը 2015թվականի հունվարին գործարկվել է կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային նոր կայքը՝ եռալեզու (հայերեն, անգլերեն, ռուսերեն) տարբերակով՝ cecnkr.am հասցեով (կայքի նախկին տարբերակը՝ cec.am հասցեով, ակտիվ կլինի մեկ տարվա կտրվածքով): Որպես նորություն, կայքն ունի կենտրոնական ընտրական հանձնաժողովի youtube-յան, fb-յան էջերին հետևելու հնարավորություններ: Նորություն է նաև «Ընտրական քրոնիկոն» ենթաբաժինը, որն իրենից ներկայացնում է տարբեր երկրների ընտրական պրոցեսների մասին տվյալների բազա:

Կայքում զետեղված է ԼՂՀ ընտրական օրենսգրքով նախատեսված անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը:

Առաջին անգամ, դրանում ներբեռնման հնարավորությամբ տեղադրվել են կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հրապարակված ձեռնարկներն ու ուղեցույցերը: Կայքը պարունակում է տեղեկատվություն 1991թվականից սկսած ԼՂՀ-ում տեղի ունեցող բոլոր ընտրությունների, հանրաքվեների վերաբերյալ, վերլուծություններ, հաշվետվություններ: Կայքի միջոցով հնարավոր է ծանոթանալ ընտրական հանձնաժողովների սնօրինության տակ գտնվող ողջ տեղեկատվությանը, ընտրական օրենսդրությանը, կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտերին, ընտրական գործընթացներին վերաբերվող միջոցառումներին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում տեղադրված է ընտրողների ռեգիստրը՝ որոնման հնարավորությամբ, որի տվյալներն, ի դեպ, հասանելի են միայն Հայաստանի Հանրապետության և ԼՂՀ տարածքից կայք այցելողներին:

Առանձնացված և առանձին կարևորություն է տրված նոր՝ «Դիտորդներ» բաժնին, որտեղ տեղադրվում են դիտորդների գրավոր եզրակացությունները, կարծիքները, ինչպես նաև նրանց վերաբերյալ տեսանյութեր, լուսանկարներ: Գործում է նաև «ԼՂՀ ընտրատարածքներ» բլոգը, որն իրենից ներկայացնում է 11 ընտրատարածքների բաժանված ԼՂՀ ամբողջ տարածքի գծապատկերը՝ դրանում ներառված համայնքներով ու հասցեներով, ներբեռնման հնարավորությամբ:

4) Ընտրողների ռեգիստրը, ընտրողների ցուցակներ

ԼՂՀ ընտրողների ռեգիստրը մշտապես վարվող փաստաթուղթ է, որը կազմվում է ըստ շրջանների (Ստեփանակերտ քաղաքի) և համայնքների: ԼՂՀ ընտրողների ռեգիստրի հիման վրա կազմվում է համայնքի ընտրողների ցուցակ՝ ըստ ընտրական տեղամասերի:

Նախկինում (2010 և 2012թ.թ.) ԼՂՀ-ում տեղի ունեցած համապետական ընտրությունների ժամանակ, ընտրողների ցուցակներում (այդ թվում՝ ընտրողների ռեգիստրում ընդգրկված) ընդգրկված ընտրելու իրավունք ունեցող անձանց թվաքանակի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ 2015թվականին աճել է ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիների թիվը:

Այսպես.

2010թվականի մայիսի 23-ին կայացած ԼՂՀ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրողների ցուցակներում ընդգրկված են եղել 98 518 ընտրողներ, իսկ 2012 թվականի հուլիսի 19-ին կայացած ԼՂՀ Նախագահի ընտրությունների ժամանակ՝ 99 227 ընտրողներ, այսինքն՝ 709-ով ավելի:

2015թվականի մայիսի 3-ին կայացած ԼՂՀ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրողների ցուցակներում ընդգրկված ընտրողների թիվը կազմել է 102 042, այսինքն՝ 2 815 ընտրողով (2,8 տոկոսով) ավելի, քան 2012թվականին կայացած Նախագահի ընտրությունների ժամանակ, և 3 524 ընտրողով (3,6 տոկոսով) ավելի, քան 2010թվականին կայացած Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ:

Համաձայն ԼՂՀ ոստիկանության կողմից տրամադրված տվյալների, ընտրությունների նախօրյակին քաղաքացիների կողմից ընտրողների ցուցակների անճշտությունների վերաբերյալ դիմումներ չեն ստացվել: ԼՂՀ ոստիկանության նախաձեռնությամբ ընտրողների ցուցակների ճշգրտման ուղղությամբ իրականացվել են մի շարք աշխատանքներ, այդ թվում՝ ընտրացուցակներից հանվել են 148 մահացած քաղաքացիների տվյալներ, հաշվառում չունեցող 14 անձինք հաշվառվել են ըստ բնակության վայրի և ընդգրկվել ընտրողների ցուցակներում: 53 քաղաքացիների ընտրացուցակներում ընդգրկված չլինելու պատճառով տրամադրվել են համապատասխան տեղեկանքներ՝ լրացուցիչ ընտրացուցակներում ընդգրկելու համար:

Քվեարկության օրվանից 2 օր առաջ ընտրական հանձնաժողովներին տրամադրված լրացուցիչ ցուցակներում ընտրողների թիվը կազմել է 296:

ԼՂՀ ոստիկանությունը, որպես բնակչության պետական ռեգիստրը վարող մարմին, տարին 2 անգամ՝ հուլիսին և հունվարին (երկշաբաթյա ժամկետում) ԼՂՀ ընտրողների ռեգիստրը՝ ըստ շրջանների և համայնքների, իսկ համապետական ընտրությունների դեպքում քվեարկության օրվանից ոչ ուշ քան 41 օր առաջ՝ նաև ըստ ընտրական տեղամասերի, էլեկտրոնային տարբերակով ներկայացնում է կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում որոնման հնարավորությամբ տեղադրելու համար: ԼՂՀ ընտրողների ռեգիստրը կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի մշտական և անբաժանելի մասն է:

ԼՂՀ ընտրական օրենսգրքի 11-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ ԼՂՀ Ազգային ժողովի քվեարկության օրվանից 40 օր և 2 օր առաջ ընտրողների ցուցակը ներբեռնման հնարավորությամբ տեղադրվել է նաև ԼՂՀ ոստիկանության կայքում: Վերջինս նորություն է:

Հարկ է նշել, որ ԼՂՀ ընտրական օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝ ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները վերացնելու մասին լիազոր մարմին դիմում ներկայացնելու իրավունքը վերապահվել է յուրաքանչյուր անձի, ընդ որում՝ տրվել է օրենսդրական հնարավորություններ կայացնելու անգամ դիմողի անձին չվերաբերող անճշտությունները վերացնելու մասին դիմում: Նշված իրավական կարգավորումների արդյունքում ընտրողների ցուցակները ենթակա են եղել լիակատար վերահսկողության ընտրական գործընթացի մասնակից բոլոր սուբյեկտների և հասարակության կողմից (բացառությամբ այլ պետություններում գտնվող քաղաքացիների):

5) Թեկնածուների առաջադրումը, գրանցումը

ԼՂՀ Ազգային ժողովի 2015թվականի մայիսի 3-ի ընտրություններին համամասնական ընտրակարգով առաջադրվել են 7 կուսակցություններ: Հանրապետության թվով 11 ընտրատարածքներում մեծամասնական ընտրակարգով առաջադրվել են 50 թեկնածուներ:

Նշված թեկնածուներից 4-ը մինչև թեկնածուների գրանցման համար սահմանված ժամկետի սկիզբը՝ ներկայացրած գրանցման փաստաթղթերը հետ են վերցրել:

Թեկնածուներին գրանցումը կատարվել է սահմանված ժամկետներում: Ընտրություններին համամասնական ընտրակարգով առաջադրված 7 կուսակցությունները՝ 164 անդամներով, գրանցվել են:

Հանրապետության թվով 11 ընտրատարածքներում մեծամասնական ընտրակարգով գրանցվել է 46 թեկնածու, որոնցից 4-ը մինչև քվեարկություն, սահմանված ժամկետում ներկայացրել են ինքնաբացարկի դիմում և քվեարկությանը մասնակցել է 42 թեկնածու: Նշված թեկնածուներից 27-ը (64%-ը) եղել են անկուսակցական, 21-ն (50%-ը) առաջադրվել են ինքնաառաջադրման կարգով, 5-ը (12%-ը) կանայք էին: Բոլոր ընտրատարածքներում քվեարկությանը մասնակցել է այլընտրանքային թեկնածու՝ 2-ական ընտրատարածքում՝ համապատասխանաբար 2-ական, 4-ական և հնգական թեկնածուներ, 4 ընտրատարածքում՝ 3 թեկնածու, 1 ընտրատարածքում՝ 8 թեկնածու:

6) Նախընտրական քարոզչություն, քարոզչության ֆինանսավորում

ԼՂՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսում է թեկնածուների, կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ: Ժամանակացույցի համաձայն՝ նախընտրական քարոզչության ժամանակահատված է սահմանվել մարտի 30-ից մինչև մայիսի 1-ի ժամը 24.00-ն:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում սահմանված ժամկետներում հրապարակված են եղել՝

- նախընտրական միջոցառումների համար անվճար տրամադրվող դահլիճների և այլ շինությունների ցանկը (բոլոր շրջաններում և Ստեփանակերտ քաղաքում ընդհանուր թիվը՝ 240).

- քարոզչական պաստառներ փակցնելու համար առանձնացված անվճար տեղերի ցանկը.

- Արցախի հանրային հեռուստառադիոընկերության կողմից տրամադրվող վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2015 թվականի մարտի 30-ի N 73-Ա որոշմամբ սահմանվել է հանրային ռադիոյից և հանրային հեռուստաընկերությունից համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցություններին անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու կարգը և ժամանակացույցը:

Նախընտրական քարոզչության համար ընտրական օրենսգրքով սահմանված բոլոր միջոցառումների կազմակերպման նախապատրաստական աշխատանքները կատարված են եղել մինչև նախընտրական քարոզչության մեկնարկը, ինչն ապահովել է բոլոր թեկնածուների համար հավասար պայմաններ և հնարավորություններ հենց նախընտրական քարոզչության մեկնարկի առաջին իսկ օրվանից:

Նախընտրական քարոզչությունն ընթացել է ակտիվ, մրցակցային: Նախընտրական հավաքների, խոսքի և տեղաշարժվելու ազատության որևէ սահմանափակում չի արձանագրվել:

ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ամփոփվել են նաև հեռուստառադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից իրականացված վերահսկողության արդյունքները և արձանագրվել, որ 2015 թվականի մայիսի 3-ի ԼՂՀ Ազգային ժողովի

ընտրությունների ժամանակ համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցություններին վճարովի հիմունքներով տրամադրվող եթերաժամանակի սակագնի սահմանման և անփոփոխության օրենսդրական պահանջների, ինչպես նաև եթերաժամանակի ոչ խտրական տրամադրման խախտումներ չեն արձանագրվել: Կան մի քանի ժամանակային շեղումներ, որոնք, սակայն, չեն ազդել ընդհանուր հեռուստառադիոքարոզարշավի որակի վրա:

ԼՂՀ Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզչության ֆինանսավորման նկատմամբ վերահսկողությունն իրականացրել է ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերաստուգիչ ծառայությունը, որը ստեղծվել է կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2015թվականի փետրվարի 13-ի N61-Ա որոշմամբ:

Ազգային ժողովի ընտրություններում համամասնական ընտրակարգով գրանցված 7 կուսակցությունները սահմանված կարգով բացել են նախընտրական հիմնադրամներ: Մեծամասնական ընտրակարգով ընտրությանը մասնակցելու համար գրանցված 46 թեկնածուներից նախընտրական հիմնադրամ են բացել 37-ը:

ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերաստուգիչ ծառայությունը, ինչպես և պահանջվում է ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասով, նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո՝ 10-րդ օրը, ինչպես նաև ընտրությունների արդյունքների ամփոփման համար ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ թեկնածուներից և կուսակցություններից ստացել է իրենց նախընտրական հիմնադրամներ կատարած մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը և հայտարարագրերում ամրագրված ծախսերը հիմնավորող փաստաթղթերը:

Միաժամանակ, վերահսկիչ-վերաստուգիչ ծառայությունը թեկնածուներին կուսակցությունների նախընտրական հիմնադրամներ կատարած մուծումների և հիմնադրամներից կատարած ծախսերի վերաբերյալ, երեք աշխատանքային օրը մեկ, տեղեկանքներ է ստացել այն բանկերից, որտեղ բացված են եղել նախընտրական հիմնադրամներ:

Ուսումնասիրելով նախընտրական հիմնադրամներ կատարած մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը և հայտարարագրերին կից փաստաթղթերը, դրանց տվյալները համադրելով բանկերից ստացած տեղեկատվության հետ՝ վերահսկիչ-վերաստուգիչ ծառայությունը կազմել է ամփոփ տեղեկանք և հայտարարագրերը ստանալուց հետո եռօրյա ժամկետում ներկայացրել կենտրոնական ընտրական հանձնաժողովի քննարկմանը: Տեղեկանքը տեղադրվել է կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

Վերահսկողության այս գործառույթն իրականացվել է հրապարակայնության և թափանցիկության պայմաններում:

Այն, որ 2015թվականի մայիսի 3-ի Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզչության ֆինանսավորման նկատմամբ իրականացվել է պատշաճ և արդյունավետ վերահսկողություն և, որ այդ գործընթացն իրականացվել է հրապարակայնության և թափանցիկության պայմաններում, փաստվում է նաև այն հանգամանքով, որ նախընտրական քարոզչության փուլում կենտրոնական ընտրական հանձնաժողովը որևէ դիմում (բողոք) չի ստացել նախընտրական քարոզչության ֆինանսավորման սահմանված կարգի խախտումների վերաբերյալ:

Նախընտրական քարոզչության ընթացքում արձանագրված առանձին խախտումները վերաբերվել են արգելված վայրերում քարոզչական պաստառներ փակցնելուն, որը որևէ ազդեցություն չի ունեցել ընտրության արդյունքի վրա:

Նշված դեպքերի վերաբերյալ ներկայացված դիմումները, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցներով ներկայացվող հաղորդումները կամ տեղեկությունները հանդիսացել

են կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովների ուսումնասիրման և քննարկման առարկա, այդ կապակցությամբ ընդունվել են որոշումներ, որոնցով պարտավորեցվել են իրավասու սուբյեկտներին վերացնել խախտումներն ու թերությունները, ինչն էլ կատարվել է համապատասխան սուբյեկտների կողմից:

7) Քվեարկություն

ԼՂՀ Ազգային ժողովի 2015թվականի մայիսի 3-ի ընտրությունների անցկացման նպատակով կազմավորվել են 279 ընտրական տեղամասեր, որոնցից 1-ը՝ Երևան քաղաքում, 1-ը՝ Շուշիի քրեակատարողական հիմնարկում: Քվեարկության օրը, առավոտյան ժամը 7.00-ին տեղամասային կենտրոններում կայացել են տեղամասային ընտրական հանձնաժողովների նիստերը և ժամը 8.00-ին բացվել են տեղամասային կենտրոնները, սկսվել է քվեարկությունը: Քրեակատարողական հիմնարկում կազմավորված տեղամասային կենտրոնը բացվել է առավոտյան ժամը 9.00-ին:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմում սահմանված կարգով նշանակված են եղել 2497 քաղաքացիներ, որոնք բոլորն էլ ներկայացել են 279 ընտրական տեղամասեր: Ընդ որում, 268 հանձնաժողովները (96%-ը) 9 հոգանոց կազմ ունեին, 8 հանձնաժողովներ 8 հոգանոց էին, 3-ը՝ 7 հոգանոց:

Համաձայն ԼՂՀ ընտրական օրենսգրքի 42-րդ հոդվածի՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներին նշանակում են համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովի անդամները՝ տարածքային ընտրական հանձնաժողովի մեկ անդամ՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի մեկ անդամ սկզբունքով՝ մասնագիտական դասընթացներ անցած և որակավորման վկայականներ ստացած քաղաքացիների շրջանակից:

Տեղամասային ընտրական հանձնաժողովականների մեծ մասը՝ 1511 քաղաքացիներ (60,5%), իգական սեռի ներկայացուցիչներ էին, 1695-ը (67,9%) անկուսակցական էին, 393-ը (15,7 %)՝ «Ազատ հայրենիք» կուսակցության, 282-ը (11,3%)՝ Արցախի ժողովրդավարական կուսակցության, 118-ը (4,7%)՝ «Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցության և 9-ը (0,4%) Լեռնային Ղարաբաղի կոմունիստական կուսակցության անդամներ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ժամը 9.00-ին, տեղեկություններ է հրապարակել ընտրությունների ընթացքի մասին, իսկ ժամը 12.00-ից սկսած՝ մինչև ժամը 21.00-ն, երեքժամյա պարբերականությամբ՝ ըստ ընտրատարածքների հրապարակել է տեղեկություններ մինչև նախորդ ժամը քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի վերաբերյալ: Քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի մասին տեղեկությունների հրապարակումից հետո դրանք՝ ըստ ընտրական տեղամասերի, տեղադրվել են հանձնաժողովի համացանցային կայքում:

Քվեարկությունը անցել հանգիստ և խաղաղ մթնոլորտում:

Ընտրական ողջ գործընթացին հետևել է ընդհանուր առմամբ 2329 վստահված անձ, ընդ որում՝ համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների թվով 1481 վստահված անձ («Ազատ հայրենիք» կուսակցություն՝ 541, «Ազգային վերածնունդ» կուսակցություն՝ 117, Արցախի ժողովրդավարական կուսակցություն՝ 288, Լեռնային Ղարաբաղի կոմունիստական կուսակցություն՝ 59, «Խաղաղություն և զարգացում» կուսակցություն՝ 33, «Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն՝ 326, «Շարժում-88» կուսակցություն՝ 117) և մեծամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող թեկնածուների 848 վստահված անձ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովում և տարածքային ընտրական հանձնաժողովներում վստահված անձանց իրավունքների իրականացմանը խոչընդոտելու կամ վերջիններիս լիազորությունները սահմանափակելու վերաբերյալ դիմումներ չեն ստացվել: Վստահված անձանց կողմից տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում գրառում կատարելն արգելելու մասին ևս որևէ բողոք տարածքային ընտրական հանձնաժողովները չեն ստացել:

Տեղամասային ընտրական հանձնաժողովներն աշխատել են մեծ ծանրաբեռնվածությամբ, նաև ընտրողների ակտիվության պատճառով երբեմն առաջացել են հերթեր, սակայն չի գրանցվել որևէ դեպք, որ այդ պատճառով խոչընդոտվի ընտրողների ընտրական իրավունքի իրականացումը և որևէ ընտրող այդ պատճառով գրկվի ընտրական իրավունքից:

8) Քվեարկության արդյունքների ամփոփում

Քվեարկության օրը ժամը 20:00-ին փակվել են բոլոր ընտրական տեղամասերը և տեղամասային ընտրական հանձնաժողովներն ընտրական օրենսգրքով սահմանված կարգով սկսել են քվեարկության արդյունքների ամփոփման նիստերը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովներն ընտրական օրենսգրքով սահմանված կարգով, քվեարկության ավարտից հետո՝ 10 ժամվա ընթացքում, ավարտել են թե՛ համամասնական և թե՛ մեծամասնական ընտրակարգով քվեարկության արդյունքների ամփոփումը:

Հարկ է նկատել, որ ընտրական տեղամասերում մեկ քվեարկության արդյունքների ամփոփման համար ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետում միաժամանակ ամփոփվել է երկու քվեարկության արդյունք, ինչի պատճառով տեղամասային ընտրական հանձնաժողովներն աշխատել են ծանրաբեռնված:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ոչ ուշ, քան քվեարկության հաջորդ օրը, ժամը՝ 00.00-ից սկսած իրականացրել է քվեարկության արդյունքների աղյուսակավորում՝ ըստ ընտրական տեղամասերի: Ընտրության արդյունքների ամփոփման ամբողջ գործընթացն իրականացվել է բաց և թափանցիկ: Ընտրական տեղամասերում վստահված անձինք, դիտորդները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները հնարավորություն են ունեցել տեսանկարահանել քվեարկության արդյունքների ամփոփման ողջ գործընթացը:

Առկա չէ որևէ բողոք կամ նույնիսկ ահազանգ, որ տեղամասային ընտրական հանձնաժողովում ներկա լինելու իրավունք ունեցող անձանց պահանջով նրանց չի տրվել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածք՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով: Առկա չէ որևէ դեպք, երբ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության տվյալները տարբերվեն կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում հրապարակված տվյալներից:

9) Քվեարկության արդյունքների վերահաշվարկ

ԼՂՀ ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածը մանրամասն կանոնակարգում է քվեարկության արդյունքների վերահաշվարկի ինստիտուտը:

Վերահաշվարկ կատարելու դիմում ներկայացնելու իրավունք ունեն թեկնածուն, վստահված անձը, եթե ներկա են եղել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը, ինչպես նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը՝ ընտրական

տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունում քվեարկության արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ հատուկ կարծիք ունենալու մասին գրառում կատարելու դեպքում: Իրավանորմով նման սուբյեկտային կազմի սահմանումը չի կրում ինքնանպատակ բնույթ: Վերահաշվարկի դիմում ներկայացնելու իրավունքից օգտվում են ընտրական գործընթացի այն մասնակիցները, ովքեր ունեն ուղղակի սուբյեկտիվ շահեր, մասնակցել են, ներկա են գտնվել տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը, արձանագրել են իրենց կարծիքով թույլ տրված խախտումները, նկատել են սխալ իրականացված հաշվարկը և այլն: Այսինքն, դիմում ներկայացնող անձն արդեն իսկ ունի լիակատար պատկերացում տեղամասում իրականացված հաշվարկի վերաբերյալ և վերահաշվարկի միջոցով, ըստ էության, նպատակ է հետապնդում արձանագրելու այդ խախտումները:

Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմում ներկայացնելու համար օրենքը սահմանել է հստակ ժամկետ՝ քվեարկության հաջորդ օրը մինչև ժամը 18.00-ն: Վերահաշվարկի դիմումի համար սահմանված են տարրական, պարզագույն պահանջներ:

Համամասնական ընտրակարգով ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմում չի ներկայացվել:

Վերահաշվարկի պահանջ ներկայացվել է թիվ 2 ընտրատարածքում՝ պատգամավորի 2 թեկնածուների վստահված անձանց կողմից, և վերահաշվարկ է իրականացվել 10 տեղամասում: Վերահաշվարկի աշխատանքները Ստեփանակերտի տարածքային ընտրական հանձնաժողովում իրականացվել են բաց, թափանցիկ, բոլոր նրանք ովքեր ցանկություն են ունեցել ներկա գտնվել վերահաշվարկին, նրանց հնարավորություն է տրվել ներկա գտնվելու և ազատորեն ծանոթանալու ու հետևելու գործնթացին:

Ի դեպ, իրականացված վերահաշվարկի արդյունքում թվով 3 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունների տվյալները կրել են աննշան փոփոխություններ, ինչը ընտրությունների վերջնական արդյունքների փոփոխության չի հանգեցրել:

Քաջաթաղի տարածքային ընտրական հանձնաժողովին հասցեագրված՝ վերահաշվարկ իրականացնելու մասին մեկ դիմում մերժվել է՝ դիմումն ըստ բովանդակության ներկայացված չլինելու պատճառով:

10) Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների անվավեր ճանաչում

ԼՂՀ ընտրական օրենսգրքի 45-րդ հոդվածի 8-րդ մասի 4-րդ պարբերության համաձայն՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները անվավեր ճանաչելու դիմում համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով կարող է ներկայացնել միայն քվեարկության հաջորդ օրը՝ մինչև ժամը 18.00-ն: Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն, եթե բողոքի կամ դիմումի քնարկման արդյունքով տարածքային ընտրական հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ քվեարկության ընթացքում տեղի են ունեցել սույն օրենսգրքի պահանջների այնպիսի խախտումներ, որոնք կարող էին էապես ազդել քվեարկության արդյունքների վրա, և եթե հնարավոր չէ պարզել քվեարկության իրական արդյունքները, իսկ խախտումը արտահայտված չէ անճշտություններում, ապա այդ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները տարածքային ընտրական հանձնաժողովը անվավեր է ճանաչում: Այդ դեպքում նյութերը ուղարկվում են դատախազություն:

2015թվականի մայիսի 3-ի ընտրությունների արդյունքներով ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումներ տարածքային ընտրական հանձնաժողովներ չեն ներկայացվել:

11) Տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում խախտումների վերաբերյալ գրառումներ

ԼՂՀ ընտրական օրենսգրքի 65-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե հանձնաժողովի անդամը կամ վստահված անձը գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել սույն օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում, ապա իրավունք ունի պահանջելու, որ իր գնահատականը արձանագրվի գրանցամատյանում:

Տարածքային ընտրական հանձնաժողովներից ստացված՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում կատարված գրառումների վերաբերյալ տվյալների համաձայն՝ կայացած ընտրություններում համապատասխան ընտրատարածքներում կազմավորված մի քանի տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում (Մարտակերտի, Քաշաթաղի շրջաններ) քվեարկության օրը՝ մայիսի 3-ին, արձանագրված բացթողում-խախտումներն օպերատիվ կարգով վերացվել են և դրանց վերաբերյալ գնահատականները որևէ ազդեցություն չեն ունեցել քվեարկության արդյունքների վրա:

2015թվականի մայիսի 8-ի դրությամբ համակարգող բոլոր վեց տարածքային ընտրական հանձնաժողովները կայացրել են համապատասխան որոշումներ, որոնց համաձայն 2015 թվականի մայիսի 3-ին կայացած ԼՂՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրությունների նախապատրաստման և քվեարկության ընթացքում տեղի չեն ունեցել ԼՂՀ ընտրական օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա:

12) Դիմում բողոքների քննարկում

2015թվականի մայիսի 3-ին կայացած ընտրությունների կազմակերպման և անցկացման ընթացքում ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել թվով յոթ գրավոր դիմում-բողոք, որոնք ԼՂՀ ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան քննարկվել և լուծումներ են ստացել:

ԼՂՀ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ օպերատիվ լուծում պահանջող հարցերի վերաբերյալ ընտրական հանձնաժողովները ձեռնարկում են համապատասխան միջոցներ: Չանգվածային լրատվության միջոցներում և տարբեր համացանցային կայքերում տեղ գտած ընտրախախտումների վերաբերյալ տեղեկությունները օպերատիվ կարգով ճշգրտվել են համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովների, պետական այլ մարմինների հետ և տեղեկությունների հաստատման պարագայում տրվել են համապատասխան ցուցումներ կամ հանձնարարություններ:

Ազգային ժողովի 2015թվականի մայիսի 3-ի հերթական ընտրությունների ընթացքում ընտրախախտումների վերաբերյալ հաղորդումների քննարկման նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետությունը բարձրացնելու և գործունեությունը համակարգելու նպատակով ԼՂՀ Գլխավոր դատախազի 30.03.2015թ. թիվ 39 հրամանով ստեղծվել է ժամանակավոր աշխատանքային խումբ, որի կողմից ընտրական իրավունքի խախտման վերաբերյալ հաղորդումների քննարկման և լուծման մասին տեղեկությունները, տրամադրված դատախազության կողմից, ներկայացվում է ստորև.

«1. 2015թ. ապրիլի 03-ին ժամը 10:30-ի սահմաններում ԼՂՀ Գլխավոր դատախազության թեժ գծի հեռախոսահամարին է զանգել «Շարժում 88» կուսակցության ներկայացուցիչ Էդուարդ Ադաբեկյանը և հայտնել, որ նախընտրական քարոզչության համար Ստեփանակերտ քաղաքի երթուղային ավտոբուսների վրա գովազդային պաստառներ տեղադրելու խնդրանքով զանգել է «Ստեփանակերտ սերվիս» ՓԲԸ-ը, սակայն վերջինիս հիմնադիր՝ Արցախի ներդրումային հիմնադրամի տնօրեն Ա. Միրզոյանից ստացել է մերժում:

Է.Ադաբեկյանին պարզաբանվել է, որ «Ստեփանակերտ սերվիս» ՓԲԸ-ը պատկանող ավտոմեքենաների թափափ արտաքին ազատ հատվածները չեն պատկանում Ստեփանակերտի քաղաքապետի «Համայնքի տարածքում քարոզչական պաստառներ փակցնելու համար անվճար տեղեր առանձնացնելու մասին» առ 03.03.2015թ. թիվ 279 Ա որոշմամբ սահմանված տարածքների շարքին:

2. 2015թ. ապրիլի 14-ին «Ազգային վերածունդ» կուսակցության ներկայացուցիչ Տիգրան Գրիգորյանը հայտնել է, որ Քաշաթաղի շրջվարչակազմի ղեկավար Ս.Խաչատրյանը նշված շրջանի Ղազարապատ համայնքի ղեկավար Արտուշ Հրանտի Ստեփանյանի միջոցով նույն գյուղի բնակիչ Սուրեն Արծրունի Ջաքարյանին հորդորել է, որ կարող է ձայն տալ ցանկացած քաղաքական ուժի, բացի «Ազգային վերածունդ» կուսակցությունից: Կատարված ստուգումների ընթացքում Ս.Ա. Ջաքարյանը հաստատել, իսկ Ղազարապատ համայնքի ղեկավար Ա.Հ. Ստեփանյանը հերքել է վերը նշվածը և բացատրություն տվել, որ Քաշաթաղի շրջվարչակազմի ղեկավար Ս.Խաչատրյանը իրեն նման հանձնարարություն չի տվել, ինքը նման քարոզչություն երբևէ չի իրականացրել, քանի որ օրենքը արգելում է համայնքի ղեկավարին զբաղվել նման քարոզչությամբ:

3. 2015թ. ապրիլի 18-ին ԼՂՀ Գլխավոր դատախազության թեժ գծի հեռախոսահամարին է զանգել «Ազգային վերածունդ» կուսակցության ղեկավար Հայկ Խանումյանը և հայտնել, որ ԼՂՀ ճանապարհային ոստիկանությունը խոչընդոտում է իրականացնել նախընտրական քարոզչություն՝ դրա համար նախատեսված տրանսպորտային միջոցները ԼՂՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության վարչության տուգանային հրապարակ տեղափոխելու միջոցով: Նույն օրը, որոշ ժամանակ անց, ԼՂՀ Գլխավոր դատախազության թեժ գծի հեռախոսահամարին է զանգել «Ազգային վերածունդ» կուսակցության ղեկավար Հայկ Խանումյանը և հայտնել, որ ԼՂՀ ճանապարհային ոստիկանության հետ կապված իրենց խնդիրները լուծել են և ցանկանում է չեղյալ ճանաչել դրա հետ կապված իր նախկին հայտարարությունը:

4. 2015թ. ապրիլի 20-ին «<http://www.aravot.am>» կայքում տպագրվել է հոդված՝ «Նախընտրական նվերներ Արցախում. բնակիչներին սառնարաններ են նվիրում» վերտառությամբ: Նշված հոդվածում «Արցախի «Ազգային վերածունդ» կուսակցությանը ահազանգել է նախընտրական շրջանում իրենց նկատմամբ Արցախի իշխանությունների գործադրած ճնշումների մասին, ինչպես նաև «Ազատ հայրենիք» կուսակցության կողմից ընտրողներին ընտրակաշառք բաժանելու մասին:

Հաղորդման ստուգման ընթացքում Հայկ Խանումյանը հայտնել է, որ իր հայտարարության մեջ նշված հանգամանքների շուրջ կոնկրետ անձանց անուններ չի կարող տալ՝ խոստանալով կրկին ուսումնասիրել նշված հոդվածը և անհրաժեշտության դեպքում պաշտոնապես հերքել այն: «Ազգային վերածունդ» կուսակցության ղեկավար Հայկ Խանումյանի կողմից հոդվածում նշված փաստերի վերաբերյալ հետազայում որևէ տեղեկություն չի ներկայացվել:

5. 27.04.2015թ. ԼՂՀ Գլխավոր դատախազություն է մուտքագրվել «Խաղաղություն և զարգացում» կուսակցության լիազոր ներկայացուցիչ Վարուժան Գաբրիելյանի դիմումն այն

մասին, որ տպագրվել է նյութ՝ «DJ Մուտիլովշիկ» վերնագրով, որը դիմումատուի կարծիքով պարունակում է զրպարտչական տեղեկություններ:

www.karabakh-life.am կայքի պատասխանատու Բելա Լալայանը բացատրություն է տվել, որ նյութերում զրպարտություն չկա, բացի այդ նա պարտավոր չէ բացահայտել տեղեկատվության աղբյուրը:

Հոդվածում կուսակցության վերաբերյալ զրպարտչական տեղեկությունների բացակայության և վիրավորանքներ պարունակելու փաստերով դիմումատուին պարզաբանվել է իր պատվի, արժանապատվության պաշտպանության համար ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ և 1087¹-րդ հոդվածներով նախատեսված հիմքերով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան դիմելու նրա իրավունքը:

Ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ հաղորդումների քննարկման արդյունքով դատախազական ներգործության միջոցների կիրառման հիմքեր չեն հայտնաբերվել:»

13) Դատարան ներկայացրած հայցադիմումները և դրանց քննությունը

Ազգային ժողովի 2015թվականի մայիսի 3-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման ընթացքում ընտրական իրավունքների խախտման վերաբերյալ դիմումներ դատարան չեն ներկայացվել:

14) Ընտրությունների արդյունքների բողոքարկում

ԼՂՀ Սահմանադրության 114-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը լուծում է Գերագույն դատարանը: ԼՂՀ Գերագույն դատարանը 2015թվականի մայիսի 3 ընտրությունների հետ կապված վեճեր չի քննարկել:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի առաջարկությունները

ԼՂՀ նոր ընտրական օրենսգրքի էական առաջընթաց արձանագրեց ընտրական իրավահարաբերությունների կարգավորման բնագավառում: Այնուամենայնիվ ընտրական օրենսգրքի պրակտիկ կիրարկումը ցույց տվեց, որ ընտրական գործընթացը կարգավորող առանձին նորմեր և ինստիտուտներ ունեն կատարելագործման անհրաժեշտություն:

Մեր դիտարկումների հաշվառմամբ, ինչպես նաև դիտորդական առաքելությունների կողմից ներկայացված եզրակացություններում առկա առաջարկությունների մանրամասն ուսումնասիրությունից հետո, ԼՂՀ ընտրական օրենսդրության կատարելագործման նպատակով ավելի ուշ կներկայացնենք համապատասխան օրենսդրական փոփոխությունների նախագիծ:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ**

Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ՑՈՒՑԱԿ

2015ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 3-ԻՆ ԿԱՑԱՑԱԾ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԸՆՏՐՎԱԾ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ

Համամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորներ			
Հ/Հ	Պատգամավորի ազգանուն, անուն, հայրանունը	Կուսակցությունը, որի ընտրական ցուցակում ընդգրկված է պատգամավորը	
1	Դադայան Ռամելա Նիկոլայի	«Ազատ հայրենիք» կուսակցություն (ԱՀԿ)	
2	Հյուսնունց Ռուդիկ Լևոնի		
3	Ավանեսյան Արպատ Սանջանի		
4	Պետրոսյան Գագիկ Ռազմիկի		
5	Իսրայելյան Ռուսլան Էդուարդի		
6	Զիվանյան Հովիկ Խանլարի		
7	Գրիգորյան Արամ Արամայիսի		
8	Օհանջանյան Արարատ Արամայիսի		
9	Ղահրամանյան Ռոբերտ Էդիկի		
10	Կասպարյան Գրիգորի Իսակի		
11	Ուլուբաբյան Վարդգես Աշոտի		
12	Խանումյան Հայկ Ռուբենի		
13	Ղուլյան Աշոտ Վլադիմիրի		
14	Գալստյան Ժաննա Գեորգիի	Արցախի Ժողովրդավարական Կուսակցություն (ԱԺԿ)	
15	Բաղրյան Վարդգես Բորիսի		
16	Բարսեղյան Լյուդմիլա Անուշավանի		
17	Պետրոսյան Գեորգի Միքայելի		
18	Մարգարյան Արմեն Թեմուրի	«Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն (ՀՅԴ)	
19	Մնացականյան Ռիտա Միքայելի		
20	Գաբրիելյան Ալյոշա Գրիգորիի		
21	Աղաբեկյան Էդուարդ Արտավազդի	«Շարժում-88» կուսակցություն	
22	Բաղունց Գագիկ Միքայելի		
Մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորներ			
Հ/Հ	Պատգամավորի ազգանուն, անուն, հայրանունը	Ընտրատարածքը	Առաջադրման ձևը (կուսակցության կողմից, ինքնառաջադրում)
1	Մելքունյան Դավիթ Հայկի	Թիվ 1	ԱԺԿ կողմից
2	Առստամյան Արսեն Արամայիսի	Թիվ 2	Ինքնառաջադրում
3	Մխիթարյան Արզիկ Մարտիրոսի	Թիվ 3	ԱՀԿ կողմից
4	Բալայան Վահրամ Ռազմիկի	Թիվ 4	ՀՅԴ կողմից
5	Բալասանյան Վիտալի Միխայիլի	Թիվ 5	«Շարժում-88» կուսակցության կողմից
6	Ավանեսյան Իվան Խորենի	Թիվ 6	ԱՀԿ կողմից
7	Հարությունյան Սերգեյ Սյոմիկի	Թիվ 7	ԱՀԿ կողմից
8	Իշխանյան Դավիթ Ռուբենի	Թիվ 8	ՀՅԴ կողմից
9	Թովմասյան Արթուր Բաբկենի	Թիվ 9	ԱՀԿ կողմից
10	Հովհաննիսյան Լեռնիկ Լենտրուշայի	Թիվ 10	ՀՅԴ կողմից
11	Ծատրյան Արմո Մարդիի	Թիվ 11	ԱԺԿ կողմից